«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ
«Իջևան» մասնաճյուղ
ՀՀ, 4001, ք. Իջևան,
Անկախության փ, 1բ
Հեռ.՝ +374 10 510 910 *5001#
Տեղեկատու՝ 86 86
www.aeb.am

ARMECONOMBANK OJSC
Ijevan Branch
1 b Independence St.,
Ijevan 4001, RA
Tel.: +374 10 510 910 *5001#
Call Center: 86 86
www.aeb.am

Հավելված 1

<<ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/01>> ծածկագրով
Հրատապ բաց մրցույթի հրավերի

<<29>> հունվարի 2025թ.

ԵՐԱՇԽԻՔ N 16350-37/10

1. Սույն երաշխիքը, ինչպես նաև սույն երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում են **Իջևանի Համայնքապետարանի** (ՀՎՀՀ՝ 07625464, գտնվելու վայրը՝ Տավուշի մար, համայնք Իջևան, ք. Իջևան, Երևանյան փ. 6) (այսուհետ՝ բենեֆիցիար) կողմից **ՀՀ ՏՄԻՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/01** ծածկագրով կազմակերպված գնման ընթացակարգին **<<ԽԱՉՄԻՇՇԻՆ>> ՍՊԸ-ի** (ՀՎՀՀ՝ 07613551, գտնվելու վայրը՝ Տավուշի մար, համայնք Իջևան, ք. Իջևան, Նալբանդյան 1/5) (այսուհետ՝ պրինցիպալ) մասնակցելուց բխող՝ նույն ծածկագրով հրավերով սահմանված պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով **<<ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ>> ԲԲԸ-ն** (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **15,566,370 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր վաթսունվեց հազար երեք հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի **900375121150** հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև **04.08.2025թ-ը**: Սույն երաշխիքի տրամադրման փաստի վերաբերյալ տեղեկատվությունը՝ երաշխիքի համարը, տրամադրող բանկի անվանումը և սույն երաշխիքի 1-ին կետում նշված ծածկագիրը՝ առանց գումարի չափի մասին նշման, երաշխիք տվող անձը երաշխիքը տրամադրելու օրը իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է սույն կետում նշված գնման ընթացակարգի հրավերում նշված՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի՝ Nazinyan81@mail.ru էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում է հայտը մերժելու մասին գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրության պատճենը և երաշխիքը:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը ստանալուցհետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

10. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կառավարիչ՝ **Ա. Այվազյան**

Սպասարկման բաժնի պետ՝ **Գ. Բաբայան**